



ՌՈՒՔԵՆ ՍՆԱԿ

Չարդի խենթը

Բեմական մենախոսություն

Քրքիջը

— Է՛հ, հա՛, հա՛, հա՛, հա՛.

Հորս դիակն ուսիս, կքալեմ ահա՛

Չարդուածներու դաշտին վրայ լուռ...

Չառա՛ն Քահանայ, դիակըդ տըխտը

Ի՛նչ ծանր է ուսիս, ի՛նչ ծանր է ուսիս...

Անշուշտ, երբ իբր խենթ արտաքսեցիր գիս

Հայրենի բոյնէդ, չի խորհեցա՛ր բնաւ,

Թէ պիտի գայի գտնել քեզ խոնաւ

Թաքստոցիդ մէջ խեղդուած, շան մը պէս,

Իմ պա՛րտքս վերջին կատարելու քեզ...

— Է՛հ, հա՛, հա՛, հա՛, հա՛.

Բոլոր խելացի մարդիկներն ահա՛,

Ահա՛ խելոքներն այս ապուշ կեանքին,

Ահա՛ անոնք, որ իրենց ծանր հոգին

Համրիչ քաշելով կ'զբոսնէին,

Ու նուիրումով մը աստուածային՝

Կիրակին անգա՛ն մը բերանով ծոմ

Տիրամօր առջև կ'սպառէին մոմ,

Շաբաթ մը ամբողջ, անվա՛խ, անհամա՛ր,
Շնալու, ստելու, գողնալու համար:

— Է՛հ, հա՛, հա՛, հա՛, հա՛.

Բոլոր տիրացու հոգիներն ահա՛,
Ահա անոնք որ, ուղեղնե՛ր ծանծա՛ղ,
Ամէն մութ հարցի ունէին ծիծաղ,
Մաղնոսով սնած սովեստներ աժան՝
Հեշտ կ'լուծէին հարցումներ դաժան,
Դամոկլեան սուրի մը տակ դող ի դո՛ղ՝
Շտեմարաննին կ'ոռցնէին գո՛հ,
Հարսնիքները շէ՛ն տօնելու վաղուա՛ն...
Ու չէին հաճէ՛ր իսկ խորհիլ Մահուան...

— Է՛հ, հա՛, հա՛, հա՛, հա՛,

Բայց ինչո՞ւ քրքիջս այսպէս կողոցայ...
Ահա բոլո՛րն ալ, բոլո՛րն ալ, բոլո՛ր,
Մութին ու լուռին մէջ անդնդախոր,
Պատկա՛ծ խօլական, պատկա՛ծ ամբարիշտ,
Պատկա՛ծ քարեղէն ցաւի մէջ ընդմիշտ,
Պատկա՛ծ, Աստուա՛ծ իմ, ու որչափ ալ կա՛յ,
Ու որչափ ալ կա՛յ, մինչև հեռակայ
Ճամբարներուն եզրը փռուա՛ծ, կարծես
Անդրհեղեղեան անտառի մը պէս...

— Է՛հ, հա՛, հա՛, հա՛, հա՛.

Լուռ գիշերներին մէջ շուներուն, ահա՛,
Երախին մէջ – դեռ կեանքով գալարուն
Կը լսեմ ճարճա՛տը ոսկորներուն...
Բարեկամ շունե՛ր, բարեկամ ձեռքե՛ր,
Բարեկամ լեզուով լափլիզուած վերքեր...
Երնե՛կ, գազաննե՛ր անբան... Բայց ինչպէ՛ս
Բոլոր արջառները, գլուխնին վե՛ս,

Սուրացին հեռո՛ւի դաշտերը անծի՛ր,
Գնդակե՛ն, բոցե՛ն, աչքերնին կարմիր...